



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՒ ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ քաղաքապետարանի ԻՐԱՎԱԲԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆ ՐԱՔԻ ՏԵԼԿԱՏԻՈՅԻ ՀԵՏ

Ուրբաթ, Մայիս 4-ի կ.ա. ժամը 11-ին, Լոս Անճելլոսի քաղաքապետարանին մեջ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեան պաշտօնական հանդիպում մը ունեցաւ Լոս Անճելլոսի քաղաքապետարանի իրաւաբան Րաքի Տելկատիոյի հետ:

Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանային Կրօնական Ժողովի, Ազգ. Վարչութեան եւ Խնամակալ Մարմնի անդամներ: Հանդիպումին ներկայ էին նաեւ Հայ Դատի, ՀՕՄ-ի եւ Հ.Մ.Ը.Մ.-ի ներկայացուցիչներ:

Հանդիպման ընթացքին, փոխադարձ ծանօթութեան, տեղեկութիւններ փոխանցուեցան Ազգ. Առաջնորդարանի եւ վարժարաններու մասին, ինչպէս նաեւ գաղութի տրիտասարդութիւնը եւ ազգային եւ հանրային վարժարաններու Հայ աշակերտութիւնը յուզող հարցեր արծարծուեցան:

Այն հանդիպման ընթացքին կը հաւատանք, որ կարելոր գործակցութիւն ստեղծուեցաւ ընդմեջ Ազգային Առաջնորդարանին, յարակից մարմիններուն եւ Լոս Անճելլոսի քաղաքապետարանի իրաւաբանական գրասենեակին: Մանրամասնութիւնները յառաջիկային:



PRELATE MEETS WITH LOS ANGELES CITY ATTORNEY ROCKY DELGADILLO

On the morning of Friday, May 4, an official meeting took place between H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Los Angeles City Attorney Rocky Delgadillo at Los Angeles City Hall. The Prelate was accompanied by Religious and Executive Council members as well as members of the Board of Regents. Representatives from the Armenian National Committee, Armenian Relief Society, and Homenetmen also participated in the meeting.



During the meeting the Prelate and the City Attorney discussed issues concerning our community youth and the student bodies of our

Prelacy schools long with Armenian students in public schools.

With this meeting we believe that an important partnership has been established between the Prelacy, its affiliates, and the City Attorney's office. Details to follow.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Ուրբաթ, Մայիս 4-ի երեկոյեան ժամը 7-ին, Լոս Անճելըսի Biltmore պանդոկին մէջ, տեղի պիտի ունենայ Հայ Մշակութային Հիմնարկութեան տարեկան ձեռնարկը: Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնը:

PRELATE TO ATTEND THE ARMENIAN CULTURAL FOUNDATION BANQUET

On the evening of Friday, May 4th, the annual banquet of the Armenian Cultural Foundation will take place at the Biltmore Hotel in Los Angeles. The Prelate will attend and convey his blessings.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՀՕՍ-Ի ՓԱՌԱՏՈՆԻ ԲԱՑՈՒՄԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԵ

Շաբաթ, Մայիս 5-ին, կ.ե. ժամը 2-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ՀՕՍ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան կազմակերպած տարեկան 6-րդ փառատօնին, աղօթքով կատարելու պաշտօնական բացումը եւ փոխանցելու իր օրհնութեան խօսքը: Առաջնորդ Սրբազան Հայրը կ'ընկերանայ Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վիգէն Ա. Զիւլ. Վասիլիան:

Երկօրեայ փառատօնը տեղի կ'ունենայ Կլէստէյլի Civic Auditorium-ի մէջ եւ պիտի շարունակուի Կիրակի, մինչեւ երեկոյեան ժամը 7-ը:

PRELATE TO OFFER OPENING PRAYER AT THE A.R.S. FESTIVAL

On the afternoon of Saturday, May 5th, the Prelate will attend the 6th annual festival of the Armenian Relief Society where he will offer the opening prayer and convey his blessings. Archpriest Rev. Vicken Vassilian, pastor of St. Garabed Church, will accompany the Prelate.

The two day festival will continue through 7:00 p.m. on Sunday, May 6th.

ԴԱԹԵԱՆ ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Շաբաթ, Մայիս 5-ին, երեկոյեան ժամը 8-ին, տեղի պիտի ունենայ Դաթեան Մարիամեան Կրթական Հաստատութեան հիմնադրութեան 20-ամեակին նուիրուած ճաշկերոյթը: Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը: Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանայ Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Թորոսեան: Ձեռնարկը տեղի պիտի ունենայ Հ.Մ.Ը.Մ. Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի «Պաղտասարեան-Շահինեան» սրահին մէջ:

20th ANNIVERSARY CELEBRATION OF DAVIDIAN-MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION

On the evening of Saturday, May 5th, the Davidian-Mariamian Educational Foundation will celebrate its 20th anniversary with a banquet to be held at the “Baghdasarian-Shahinian” hall of the Homenetmen Glendale “Ararat” chapter.

The Prelate will attend the banquet, accompanied by Rev. Gomidas Torossian, and will convey his blessings to the Foundation.

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐՈՒ ԲԱՑՈՒՄ ԵՒ ԶԱՅԻ ԲՈՑԱՎԱՌՈՒՄ

Կիրակի, Մայիս 6-ին, կէսօրէ ետք ժամը 1:30-ին, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Նահատակաց Խաչքարին մօտ, յաւարտ Ս. Պատարագի, պիտի կատարուի Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 32-րդ Մարզախաղերու բացման հանդիսութիւնը եւ Նաւասարդեան ջահի օրհնութիւնը:

Խումբ մը մարզիկ-սկաուտներ Նաւասարդեան Խաղերու ջահը յատուկ արարողութեան մը ընթացքին պիտի բոցավառեն Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուող Նահատակաց Յուշարձանին առջեւէն ու զայն պիտի փոխանցեն ՀՄԸՄ-ի Շրջանային Վարչութեան:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան ներկայ պիտի ըլլայ այս հանդիսութեան ու պիտի կատարէ բացման աղօթքը:

H.M.E.M. NAVASARTIAN GAMES OPENING CEREMONY AND LIGHTING OF THE TORCH

The opening ceremony of the 32nd Navasartian Games and the lighting of the torch will take place on the afternoon of Sunday, May 6th, following Holy Mass. The ceremony is to take place in the courtyard of St. Mary's Church in Glendale, in front of the Khachkar (monument) dedicated to our martyrs.

Rev. Vazken Atmajian, pastor of St. Mary's Church, will attend the ceremony on behalf of the Prelate and offer the opening prayer.

ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ ԶԱՅ ԶՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՅԿԵՐՈՅԹ

Կիրակի, Մայիս 6-ին, երեկոյեան ժամը 5:30-ին, Փասատիկայի Զայ Կեդրոնին մէջ տեղի պիտի ունենայ Սահակ Մեսրոպ Զայ Զրիստոնեայ վարժարանի 27-րդ տարեկան ճաշկերոյթը: Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Զոզ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիւմեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

ANNUAL BANQUET OF SAHAG-MESROB ARMENIAN CHRISTIAN SCHOOL

On Sunday, May 6th, the 27th annual banquet of Sahag-Mesrob Armenian Christian School will take place at the Pasadena Armenian Center.

Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate at the banquet.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org. Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.